



ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի առաջատար գիտաշխատող, ճարտարապետության դոկտոր Լույս Դոլուխանյանը ծնվել է 1937 թ. հունվարի 29-ին Երևանում, տոհմական մտավորականներ՝ Երևանի առաջին կառուցողներից մեկի՝ ինժեներ-շինարար Կարեն Դոլուխանյանի (համագործակցել է անվանի ճարտարապետներ Ալ. Թամանյանի, Ն. Բունիաթյանի, Կ. Հալաբյանի, Մ. Մազմանյանի և այլոց հետ) և քիմիկոս Ոսկի Բաբայանի ընտանիքում:

1955-ին Լ. Դոլուխանյանն ավարտում է Երևանի Ռ. Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանի դաշնամուրային բաժինը և կոմպոզիտոր Ա. Հարությունյանի հետ Երևանի միջնակարգ դպրոցներում ձեռնամուխ լինում երաժշտական ստուդիաների ստեղծմանը՝ դաշնամուրի դասեր տալով

Տ. Շնչենկոյի անվան դպրոցում:

1954-ին ավարտելով Ա. Չեխովի անվան N 55 միջնակարգ դպրոցը՝ Լ. Դոլուխանյանն ընդունվում է Երևանի Կ. Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտի ճարտարապետության բաժինը, որն ավարտում է 1960-ին՝ «ճարտարապետություն» մասնագիտությամբ և որպես ճարտարապետ աշխատանքի անցնում «Հայպետնախագիծ» նախագծային ինստիտուտում: Լ. Դոլուխանյանը պատկանում է 60-ականների այն առանձնահատուկ սերնդին, որն աչքի էր ընկնում ստեղծագործական և գեղագիտական ընկալումներով, մասնագիտական հակումներով և առհասարակ, կյանքի, արվեստի ու ճարտարապետության հանդեպ նոր վերաբերմունքով, ձգտում էր դուրս գալ ավանդական սահմաններից և ստեղծել ժամանակի պահանջներին համահունչ նորը: Երիտասարդ ճարտարապետներ Լ. Դոլուխանյանը, Մ. Քալաշյանը և Լ. Էլոյանն իրենց գեղագիտական հայացքները մարմնավորվում են «Արագիլ» սրճարանի ձևավորման մեջ. գեղարվեստադեկորատիվ ձևավորման այս անդրանիկ փորձը համարձակ քայլ էր, որը մեծ արձագանք ստացավ Երևանի հասարակական կյանքում, և որը ողջունեցին Մարտիրոս Մարյանը, Մինաս Ավետիսյանը և ուրիշներ:

1962-ին Լ. Դոլուխանյանին հրավիրում են աշխատանքի ՀԼԿԵՄ կենտրոնական կոմիտե՝ որպես պրոպագանդայի և ագիտացիայի բաժնի կուլտուր-մասսայական աշխատանքների սեկտորի վարիչ, և նա նախաձեռնում է ստեղծագործական երիտասարդության հետ կապված բազմաթիվ հետաքրքիր միջոցառումներ:

Լ. Դոլուխանյանը 1966-1970-ին ուսումնառությունը շարունակում է ԽՍՀՄ գեղարվեստի ակադեմիայի Բ. Ռեպինի անվան գեղանկարչության, քանդակագործության և ճարտարապետության ինստիտուտի (Լենինգրադ) ասպիրանտուրայում՝ «ճարտարապետական նախագծում» ամբիոնում, որտեղ պաշտպանում է թեկնածուական ատենախոսություն՝ «Մովետական Հայաստանի ճարտարապետությունը 1920-ական և 1930-

ական թվականների սկզբին» թեմայով և ստանում ճարտարապետության թեկնածուի գիտական աստիճան:

1972-ից Լ. Դոլուխանյանը Հայաստանի ճարտարապետների միության անդամ է, 1981-1985 թթ.՝ ՀՃՄ վարչության անդամ:

1973 թ. Լ. Դոլուխանյանն աշխատանքի է անցնում ՀԽՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտում՝ որպես Հայաստանի պատմության և մշակույթի հուշարձանների համահավաք ժողովածուները պատրաստելու նպատակով կազմակերպված հատուկ խմբի (1979-ից՝ Պատմության և մշակույթի հուշարձանների համահավաքի բաժին) ավագ գիտաշխատող-այդուհետև հարազատ գիտական օջախի հետ են անխզելիորեն կապվում ճարտարապետության պատմաբանի գիտաստեղծագործական կյանքի շուրջ չորս տասնամյակները:

Աշխատելով Պատմության և մշակույթի հուշարձանների համահավաքի բաժնում՝ Լ. Դոլուխանյանը, տեղում հուշարձաններին ծանոթանալու և նյութեր հավաքելու նպատակով, մասնակցում է դեպի Էջմիածին, Աշտարակ, Մասիս, Արտաշատ, Նաիրի, Արթիկ, Մարալիկ, Լենինական կազմակերպված գիտական արշավախմբերին և գրում ավելի քան 100 հոդված Երևանի, Լենինականի, ինչպես նաև Էջմիածնի, Հոկտեմբերյանի, Ախուրյանի, Ամասիայի շրջանների հուշարձանների մասին:

ԳԱ նախագահության որոշմամբ, որպես ՀԽՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի միջազգային կապերի գծով գիտքարտուղար, 1985-ին Լ. Դոլուխանյանն ընդգրկվում է ինստիտուտի գիտական խորհրդի կազմում:

1997-ին նա ԵՊՃՇՀ մասնագիտական խորհրդում պաշտպանում է դոկտորական ատենախոսություն՝ «Արդի հայ ճարտարապետության գեղարվեստական կազմավորման խնդիրները» թեմայով և ստանում ճարտարապետության դոկտորի գիտական աստիճան՝ դառնալով Հայաստանում առաջին կին ճարտարապետության դոկտորը: 1998-ից Լ. Դոլուխանյանը ԵՊՃՇՀ «Ճարտարապետության» 029 (ներկայումս՝ «Շինարարության և ճարտարապետության» 030) մասնագիտական խորհրդի անդամ է: Գիտական գործունեությանը զուգընթաց 1998-2004 թթ. Լ. Դոլուխանյանը Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի արվեստաբանական ֆակուլտետում դասավանդում է համաշխարհային (Վերածննդի, Բարոկկոյի, կլասիցիզմի, XIX և XX դդ.) և հայկական (XIX - XX դդ.) ճարտարապետության պատմություն:

2005-ից Լ. Դոլուխանյանը ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի կերպարվեստի բաժնի առաջատար գիտաշխատող է, գիտական խորհրդի անդամ:

Գիտական նշանակալի վաստակի համար ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի հիմնադրման 50-ամյա հորեյանի կապակցությամբ, Լ. Դոլուխանյանը 2008-ին պարգևատրվում է ՀՀ ԳԱԱ Վաստակագրով:

Լայն ու ընդգրկուն են հետազոտողի գիտական հետաքրքրությունների շրջանակները: Նրան հավասարապես զբաղեցրել են թե՛ Երևանի պատմական հուշարձանների և ազգային արժեքների պահպանման հարցերը, թե՛ Խորհրդային Հայաստանի ճարտարապետության զարգացման առանձին խնդիրները, թե՛ Հայաստանի անվանի ճարտարապետների ստեղծագործական ժառանգության ուսումնասիրությունը: Ճարտարապետության պատմաբանի հետազոտությունների կարևոր բնագավառներից են հայ ճարտարապետության գեղագիտական պրպտումների կազմավորման ընթացքի լուսաբանումն ու վերլուծությունը:

Ծանրակշիռ է Լ. Դոլուխանյանի վաստակը Հայաստանի նոր ճարտարապետության

ուսումնասիրության գործում: 1980 թ. «Սովետական գրող» հրատարակչությունը լույս է բնծայում Լ. Դոլուխանյանի անդրանիկ աշխատությունը՝ «Архитектура Советской Армении. 20-ые годы» (գիտ. խմբագիր՝ Ա. Գրիգորյան) մենագրությունը, որը դարձավ կարևոր քայլ ու անհրաժեշտ հանգրվան Խորհրդային Հայաստանի ճարտարապետության ուսումնասիրության բնագավառում: Հեղինակը շոշափում է Խորհրդային Հայաստանի ճարտարապետության կայացման առաջին քայլերի՝ բավական կարևոր և հետաքրքիր ժամանակաշրջանը, որը մինչ այդ ուսումնասիրված չէր, նկարագրում է 1920-ականների ճարտարապետական և մշակութային կյանքը Հայաստանում, բացահայտում ավագ սերնդի ճարտարապետների մասնագիտական գործունեությունը: Մենագրության մեջ բազմակողմանի վերլուծության է ենթարկվում 1924 թ. Ալ. Թամանյանի կազմած Երևանի հատակագիծը, բացահայտվում են քաղաքաշինական այն նորագույն նվաճումները, որոնք Ալ. Թամանյանը հմտորեն օգտագործել էր իր նախագծում: Ավագ սերնդի վարպետների հետ մեկտեղ աշխատում էին երիտասարդ ճարտարապետները, որոնց մասնագիտական գործունեությունը զգալի հետք է թողել Հայաստանի 1920-1930-ականների ճարտարապետության մեջ: Հեղինակը, օգտվելով արխիվային նյութերից, գիտական շրջանառության մեջ է դրել հին լուսանկարներ, նախագծեր, թերթել ժամանակակից մամուլը, ներկայացրել Հայաստանի 20-30-ականների սկզբի ճարտարապետական կյանքի ժամանակագրությունը: Այս ամենի շնորհիվ հետազոտությունը դարձել է անգնահատելի սկզբնաղբյուր՝ այդ շրջանի հետագա վերլուծության համար: Բնչպես նկատում է անվանի արվեստաբան Նոնա Ստեփանյանը, «Լ. Դոլուխանյանի հիմնական ծառայությունն է Սովետական Հայաստանի ճարտարապետության զարգացման առաջին փուլի և ոճի ձևավորման ընթացքի հետազոտությունը, 20-ական թվականների ականավոր ճարտարապետների գործունեության վերագնահատումը, նրանց վաստակի, ստեղծագործական առաջարկների և ծրագրերի հրապարակումը: Բայց կա ևս մի ծառայություն, որ դուրս է բուն տեքստի սահմաններից. Հայաստանի 20-ական թվականների ճարտարապետական ժառանգության հրապարակումը՝ իր ամբողջ ծավալով ու բազմազանությամբ, մեր հանրապետության ժամանակակից ճարտարապետական պրակտիկայում հիմնավորում ու հիմք է ստեղծում առաջադիմական միտումների համար: Թե ֆունկցիայի և թե պլաստիկայի առումով մեր օրերի ամենահամարձակ, «ամենագտնված» լուծումները՝ Երիտասարդական պալատը, օդանավակայանի նոր շենքը, «Հրազդան» մարզադաշտը, Կամերային երաժշտության տունը, հանրապետության լեռնային շրջաններում (Ղափան, Գորիս) բնակելի զանգվածների հատակագծումը, միկրոշրջաններ ստեղծելու առաջարկները, քաղաքային թաղամասերի կանաչապատման գաղափարները, ժամանակակից արդյունաբերական կառույցների կոնստրուկցիայում կերպարայնության հասնելու միտումը իրենց կռվանն ունեն 20-ական թվականներին գործող հայ ճարտարապետների նախագծերում, հղացումներում ու գաղափարներում: Մեր օրերի ճարտարապետության առաջատար գործիչներն իրենց նախորդներն են ունեցել Սովետական Հայաստանում, և դրանք եղել են 20-րդ դարի ականավոր ճարտարապետները»<sup>1</sup>:

1990-ին հրատարակվում է Լ. Դոլուխանյանի «Նիկողայոս Բունիաթյան» մենագրությունը (հայերեն և ռուսերեն)՝ նվիրված Հայաստանի XX դ. ճարտարապետների փառահեղ սերնդի ներկայացուցիչ, Պետերբուրգի գեղարվեստի ակադեմիայի շրջանավարտ, Երևանի

<sup>1</sup> Ստեփանյան Ն., Ակունքների մոտ (Սովետական արվեստ, 1981, N 3, էջ 60):

առաջին գլխավոր ճարտարապետ (1924-1938), Երևանի պետական համալսարանի տեխնիկական ֆակուլտետի ճարտարապետական բաժանմունքի հիմնադիրներից Նիկողայոս Բունիաթյանի (1878-1943) ստեղծագործական ժառանգության ուսումնասիրությանը, ինչը հնարավորություն է ընձեռում ծանոթանալու Հայաստանի ճարտարապետակառուցողական դպրոցի կազմավորման բարդ ընթացքին: 1924-ին Մոսկվայից Երևան հրավիրված ճարտարապետին վստահվեց Երևանի վերակառուցման ղեկավարությունը, իսկ նրա նախագծած ավելի քան 70 շենքերը նշանակալի դեր խաղացին Հայաստանի նոր ճարտարապետության ստեղծման գործում: Մեծ էր նրա՝ նաև որպես ճարտարապետության հետազոտողի ներդրումը: Աշխատությունը գրված է ճարտարապետի անձնական արխիվի և նախագծերի ուսումնասիրության հիման վրա:

Շարունակելով XX դ. ստեղծագործած հայ ճարտարապետների դիմանկարների շարքը՝ Լ. Դոլուխանյանը 1997-ին հրատարակում է «Հովհաննես Քաջազնունին՝ ճարտարապետ» մենագրությունը: Թեև շատ էր գրվել Հայաստանի Առաջին հանրապետության առաջին վարչապետ Հովհաննես Քաջազնունու (1868-1937) հասարակական-քաղաքական և կուսակցական գործունեության մասին, սակայն դեռևս ուսումնասիրված չէր նրա՝ որպես ճարտարապետի գործունեությունը: Լ. Դոլուխանյանի աշխատությունը՝ հեղինակի երկար տարիների գիտական պրպատումների հանրագումարը, սույն հիմնահարցի հետազոտման անդրանիկ փորձն էր: Քչերին է հայտնի, որ Հայաստանի քաղաքներում մի շարք շենքեր են կառուցվել ճարտարապետական փայլուն կրթություն ստացած, երկար տարիներ Բարվում, Բաթումում, Թիֆլիսում աշխատած՝ Պետերբուրգի քաղաքացիական շինարարների ինստիտուտի շրջանավարտ Հ. Քաջազնունու նախագծերով: Նա Ալ. Թամանյանի, Ն. Բունիաթյանի և այլոց հետ նորագույն ժամանակաշրջանի ճարտարապետներից է: Մեծ են Քաջազնունու ծառայությունները Խորհրդային Հայաստանի 1920-1930-ական թվականների ճարտարապետական մշակույթի զարգացման, Հայաստանում ճարտարապետական առաջին կադրերի պատրաստման գործում:

2008-ին լույս է տեսնում Լ. Դոլուխանյանի «Ռաֆայել Բարայեյան» (հայերեն, ռուսերեն և անգլերեն) աշխատությունը՝ նվիրված հայ ականավոր ճարտարապետի ծննդյան 100-ամյակին: Մա ԽՍՀՄ ժողովրդական ճարտարապետ, ԽՍՀՄ պետական մրցանակի դափնեկիր Ռ. Բարայեյանի (1908-1973) ստեղծագործության ուսումնասիրության՝ Լ. Դոլուխանյանի շուրջ 10-ամյա աշխատանքի հանրագումարն է: Հեղինակը խորապես ուսումնասիրել է ճարտարապետի արխիվը, թերթել ժամանակի մամուլը, ծանոթացել Ռ. Բարայեյանի տեսական հոդվածներին:

Գրքում տրված է ճարտարապետի ստեղծագործական ժառանգության ընդհանուր բնութագիրը, ընթերցողի առջև բացահայտվում են ճարտարապետի առանձին ստեղծագործությունների՝ «Արարատ» տրեստի գինու մատանների, «Հաղթանակի» հուշակոթողի, հասարակական և բնակելի շենքերի, եկեղեցական կառույցների, ճարտարապետական փոքր ձևերի ոճական առանձնահատկությունները: Ճարտարապետի ստեղծագործության մասին պատմող ուսումնասիրության եզրափակիչ ակորդը Մարդարապատի ճակատամարտի հուշահամալիրն է (1968)՝ նվիրված 1918 թ. մայիսի 22-28-ին Մարդարապատում թուրք զավթիչների դեմ մղված պատմական ճակատամարտին:

Լ. Դոլուխանյանը հեղինակ է Հայաստանի և արտերկրի տարբեր գիտական ժողովածուներում և ամսագրերում հրատարակված բազմաթիվ հոդվածների, որտեղ

ուսումնասիրվել են արդի ճարտարապետության տարբեր հարցեր: Նրա գիտական աշխատությունների հերոսները, մի կողմից, ժամանակակից հայ ճարտարապետության ակունքներում կանգնած ականավոր ճարտարապետներն են՝ Ալ. Թամանյանը, Ն. Բունիաթյանը, Հ. Քաջազունին, Մ. Մազմանյանը, Կ. Հալաբյանը, Գ. Քոչարը, Տ. Երկանյանը, Զ. Բախչինյանը, Ս. Սաֆարյանը, Ա. Տեր-Ավետիքյանը, Ռ. Բարայեյանը, Գ. Աղաբաբյանը, մյուս կողմից՝ իր ժամանակակիցները՝ Ս. Քալաշյանը, Հ. Պողոսյանը, Յու. Սաֆարյանը և ուրիշներ: Լ. Դոլուխանյանի հոդվածները գիտական չոր հետազոտություններ չեն. դրանց էջերից մեզ են ներկայանում վառ, բազմակողմանի անհատականություններ, որոնց առջև նա խոնարհվում է և վերապրում յուրաքանչյուրի ճակատագիրը: «Ես ապրել եմ իմ հերոսների կյանքով», - խոստովանում է ճարտարապետության պատմաբանը: Նա զեկուցումներով հանդես է եկել հայ արվեստին նվիրված միջազգային երկրորդ (1978) և չորրորդ (1985) սիմպոզիումներում, ինչպես նաև Երևանում, Մոսկվայում և Բուխարեստում կազմակերպված միջազգային, համամիութենական և հանրապետական մի շարք գիտաժողովներում:

Լ. Դոլուխանյանը երկար տարիներ եղել է Հայաստանի կանանց հանրապետական խորհրդի նախագահության անդամ, ղեկավարել կանանց խորհրդին առնթեր՝ «Կինը, Գեղեցիկը, Արվեստը» կենտրոնը: 2009-ից ՀՀ հանրային խորհրդի՝ Գիտության, կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի հանձնաժողովի անդամ է:

Այսօր էլ հայկական ճարտարապետության պատմագիտության առաջատարներից մեկը՝ Լ. Դոլուխանյանը, շարունակում է արարել. շուտով ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ լույս կտեսնի «Քանդակը ժամանակակից Հայաստանի ճարտարապետության մեջ» մենագրությունը, որտեղ առաջին անգամ ուսումնասիրվում են ճարտարապետության և կերպարվեստի համադրության խնդիրները:

Վերստին շնորհավորելով մեր գործընկերոջը հորեկյանի կապակցությամբ՝ մաղթում ենք արևշատություն և գիտաստեղծագործական նորանոր նվաճումներ:

ԱՄԱՏԵՅԱՆ Ա. Գ.

Արվեստագիտության դոկտոր